

Միայն մեռածը գիտե Բրուկլինը

Ոչ մի տղա չի կարող ծայրիցծայր ճանաչել Բրուկլինը, որովհետև եթե ամբողջ կյանքում էլ ման գա, չի գտնի այդ, թո՛ւհ. . . շան ծնունդ քաղաքի տեղը:

Հա, ուրեմն մի օր կանգնել, սպասում եմ գնացքիս, մեկ էլ մի աժդահա տղա տեսա. կյանքումս առաջին անգամ էի նրա պես տղա տեսնում: Դե, ինչպես ասեմ, նա ոնց որ գիժ լիներ: Շատ էր գժի նման, բայց փորձում էր իրեն հանգիստ պահել. բավականին քաղաքավարի էր խոսում, հետո՝ հպարտհպարտ էլ քայլում էր: Հա, ուրեմն այս աժդահա տղան մոտենում է փոքրիկ մի տղայի ու հարցնում. «Ինչպե՞ս կարելի է գնալ ութերորդ ավենյուի վաթսունվեցերորդ փողոցը»:

«Հիսո՛ւս. . . Այ թե բռնացրիր ինձ շեֆ, — ասում է փոքրիկ տղան: — Ինչ ասեմ, ախր ես երկար ժամանակ այստեղ չեմ եղել է: Հը՞: Տեսնես որտե՞ղ է. . . Երևի Ֆլաթբուշ թաղամասում, հա՞. . . »:

«Չէ՛, — ասում է աժդահա տղան: — Այդ փողոցը Բենսընիսթում է: Բայց ճիշտն ասած, ես ոչ մի անգամ այնտեղ չեմ եղել: Ինչպե՞ս կարելի է հասնել այդ փողոցը»:

«Հիսո՛ւս, — ասում է փոքրիկ տղան՝ գլուխը քորելով: Հասկանում եք, ինչպես երևում էր, փոքրիկ տղան չգիտեր Բենսընիսթի տեղը: «Դու ինձ բռնացրիր, շեֆ: Ես առաջին անգամ եմ այդ թաղամասի անունը լսում: Իսկ ձեր տղերքից գիտե՞ն, թե դա որտեղ է», — հարցնում է ինձ:

«Իհարկե, — ասում եմ: — Բենսընիսթում է: Ուրեմն նստում ես Չորրորդ ավենյուի ճեպընթացը, հասնում ես հիսունինը փողոցը, հետո Սիբ Բիջի գնացքով հասնում Տասնութերորդ ավենյուի տասնվեցերորդ փողոցը: Հետո մի չորսհինգ շենք կքայլես, կհասնես քո ուզած փողոցը»:

«Գնա էն կողմ է՛, — ասում է խելոք մի տղա՝ չգիտես որտեղից իմ դեմ հայտնվելով: — Ինչ ես ասում է՛, մարդ բան չի հասկանում, թե ինչ է խոսում. . . Հիմա ասեմ ինչ արա, — դիմում է աժդահա տղային: — Ուրեմն նստում ես Վեսթ Էնդի գնացքը, հասնում Տասնվեցերորդ ավենյու և երկու շենք անցնելուց հետո կհասնես քո

ուզած տեղը»: Օ, նա շատ խելոք տղա էր, հասկանում էք: «Հա՞, — ասում եմ: — Քեզ ո՞վ է այդքան շատ բան սովորեցրել»: Այդ տղան ինձնից նեղացավ, որովհետև այդ հարցում նա այնքան խելոք էր իրեն կարծում: Հարցնում եմ. «Ինչքա՞ն ժամանակ կլինի, որ ապրում ես այստեղ»:

«Ամբողջ կյանքս, — ասում է նա: Հետո թե՛ «Ես Ուիլյամսբրոուս եմ ծնվել: Այս քաղաքի մասին բաներ պատմեմ, որ կյանքումդ լսած չլինես»:

«Հա՞ », — ասում եմ:

«Հա՛ »:

«Դե ուրեմն այս քաղաքի մասին բաներ պատմիր, որ ոչ մեկը լսած չլինի: Երևի դու այդ բոլորը հնարում ես հա՞, գիշերը, քնելուց առաջ. . . ինչպես տիկնիկային թատրոնում»:

«Յա՞ . . . Երևում է շատ խելոքն ես, հը՞ »:

Ասում եմ. «Հաստատ չգիտեմ: Թոչունները դեռ իմ գլուխը Լինքոլնի արձանի գլխի հետ չեն շփոթել: Բայց. . . գոնե այնքան խելք ունեմ, որ մեկին հանդիպելիս կարողանում եմ ջոկել՝ նա ճիշտ է ասում, թե չէ»:

«Ուրեմն էդքան խելք ունես, հա՞: Մի օր քիթդ կջարդեն, նոր կհասկանաս, թե ինչքան խելոք ես»:

Դե իմ գնացքը գալիս էր, թե չէ հենց այնտեղ նրա քիթմուրը կջարդեի. բայց երբ տեսա գնացքս գալիս էր, միայն այսքան բան հասցրի ասել. «Շատ լավ, հիմարի մեկը. . . Ափսոս չեմ կարող սպասել, որ քեզ մի լավ ջարդեմ, բայց մի օր կհանդիպեմ քեզ, երևի. . . գերեզմանոցում. . . »: Հետո ասում եմ այն աժդահա տղային, որ ամբողջ ժամանակ կանգնել էր մեր կողքին. «Արի ինձ հետ»: Ու գնացք նստելիս հարցնում եմ. «Դու Բենսընիսթ ես գնում, չէ՞: Ո՞ր տունն ես փնտրում»: Դե գիտեք, եթե նա ինձ հասցեն ասեր, երևի կարողանայի օգնել:

Ասում է. «Օ, գիտեք, ես ոչ մի փողոց էլ չեմ փնտրում: Ես Բենսընիսթում ոչ մեկին չեմ ճանաչում»:

«Ուրեմն ի՞նչ գործ ունես, որ գնում ես այնտեղ»:

«Դե ոնց ասեմ. . . Ուզում եմ Բենսընիսթը տեսել: Ինձ դուր է գալիս, երբ արտասանում եմ այդ անունը՝ Բենսընիսթ: Դրա համար որոշեցի՝ գնամ տեսնեմ»:

Ասում եմ. «Երևի ինձ ձեռ ես առնում, հա՞: Հիմարի տե՞ղ ես դնում»: Հասկանում եք, այդ պահին ինձ թվաց, թե տղան բոլորովին էլ խենթի պես չէր խոսում:

«Ճիշտ եմ ասում: Ես շատ եմ սիրում գեղեցիկ անուններով վայրեր տեսնել»:

Հարցնում եմ. «Եթե ոչ մի անգամ այնտեղ չես եղել, ի՞նչ գիտես, որ գեղեցիկ անուններով վայրեր կան»:

«Ես քարտեզ ունեմ»:

«Քարտե՞զ», — հարցնում եմ:

«Իհարկե, — ասում է: — Ես քարտեզ ունեմ, որտեղ նշված են այդ բոլոր վայրերի անունները»:

Եվ, Հիսուս Քրիստ՝ ս. . . այդ տղան գրպանից հանում է մեծ քարտեզը, — ճիշտ է, իմ օգնությամբ, — որի վրա, թո՛ւհ. . . այդ գրողի տարած բոլոր վայրերը կային: Եվ Քանըրիզն ու Իսթ ՆյուՅորքը, և՛ Ֆլաբուշն ու Բենսընիսթը, Սաուդ Բրուկլինը և՛ Բեյ Ռիջը. . . Գրինվիլլը. . . բոլոր, բոլոր գրողի տարած այդ վայրերը նա իսկույն գտավ քարտեզի վրա:

Հարցնում եմ. «Դու սրանից որևէ մեկում եղե՞լ ես»:

«Իհարկե՛, — ասում է: — Համարյա բոլոր տեղերում ել եղել եմ: Հենց երեկ երեկոյան Ռեդ Հուկում էի»:

«Հիստ՛ւս. . . Ռեդ Հուկո՞ւմ, — հարցնում եմ: — Իսկ ի՞նչ գործ ունեիր այնտեղ»:

«Հէջ, ասում է, — թափառում էի: Հետո մի երկու տեղ մտա, մի քիչ խմեցի. բայց հիմնականում թափառում էի»:

«Ուրեմն հենց այնպես թափառո՞ւ էիր», — ասում եմ:

«Հա: Թափառում էի ու դեսուդեն նայում»:

«Իսկ ո՞ւր էիր գնում», — հարցնում եմ:

«Ահ, — ասում է, — ես այդ տեղի անունը չեմ հիշում, բայց քարտեզիս վրա կարող եմ գտնել: Մի անգամ քայլում էի մեծ դաշտերի միջով: Ոչ մի տուն չէր երևում, բայց լուսավորված նավեր տեսա: Նավերը բեռնում էին: Դաշտերի միջով քայլեցի դեպի նավերը»:

«Դե, պարզ է, — ասում եմ: — Իմացա, թե դու որտեղ ես եղել: Էրի Բագինում, հը՞ . . .»:

«Հա: Երևի: Մեծ ամբարձիչները նավերն էին բարձում, և ես մի քանի նավեր տեսա չոր ծովախորշում. դրա համար էլ քայլեցի դաշտերի միջով՝ որտեղ նավերն էին»:

«Հետո ի՞նչ արեցիր», — ասում եմ:

«Առանձնապես ոչինչ: Մի քիչ մնացի այնտեղ, հետո դաշտերի միջով ետ եկա, մի երկու տեղ մտա՝ խմեցի»:

«Դու ոչ մի արկածի չհանդիպեցի՞ր»:

«Չէ: Միայն մի տեղ երկու հարբած տղա սկսեցին կռվել, բայց նրանց շուտով հանգստացրին: Հետո այդ տղաներից մեկը նորից ետ եկավ, իսկ երբ բարմենը բեյսբոլի մականը վաճառասեղանի տակից հանեց, տղան նորից դուրս գնաց»:

«Հիստ՛ւ . . . , — ասացի: — Ախր դու Ռեդ Հուկում ես եղել . . .»:

«Իհարկե՛, — ասում է: — Ճիշտ է՝ հենց այնտեղ էի»:

Ասում եմ. «Դու էլ այնտեղ մի գնա: Հեռու մնա Ռեդ Հուկից»:

«Ինչո՞ւ, — ասում է: — Ի՞նչ է եղել որ»:

«Լավ կլինի այնտեղ չգնաս: Այսքան բան: Լավ կլինի հեռու մնաս»:

«Ախր ինչո՞ւ է՛, ինչու»:

Հիստ՛ւս . . . Ինչպես վարվես այդ դմբո տղայի հետ: Հետո, տեսա, որ անօգուտ էր նրան բացատրելը: Միևնույն է, չէր հասկանա՝ ինչի մասին էր խոսքը: Դրա համար էլ պարզապես ասում եմ. «Չէ, առանձնապես բան չկա: Ուղղակի կարող ես այնտեղ մոլորվել»:

«Մոլորվե՞մ . . . Չէ՛, չէ՛ . . . Ես չեի մոլորվի: Ախր ինձ մոտ քարտեզ կար»:

Քարտեզ . . . Այն էլ Ռեդ Հակում . . . Հիստ՛ւս Քրիստո՛ս . . . Այդ ժամանակ տղան սկսում է ամեն տեսակ հարցեր տալ. թե շա՞տ մեծ է Բրուկլինը, հո չի՞ մոլորվի այնտեղ, հետո՞ ինչքա՞ն ժամանակում կարող է ծայրիցծայր ճանաչել այն:

«Լսի՛ր . . . , — ասում եմ: — Հենց հիմա գլխիցդ հանիր այդ միտքը: Ախր դու երբեք չես կարող ճանաչել Բրուկլինը՝ թեկուզ հարյուր տարում: Ես ամբողջ կյանքս այնտեղ եմ ապրել, բայց չգիտեմ, լրիվ ճանաչո՞ւմ եմ, թե ոչ. . . էլ ուր մնաց դու»:

«Հա, ճիշտ է, — ասում է, — բայց ես հետս քարտեզ եմ վերցրել, որ չմոլորվեմ»:

«Քարտեզ ունենաս, թե չունենաս, մեկ է, Բրուկլինը չես կարող ճանաչել»:

«Իսկ դու լողալ գիտե՞ս», — պարզ ու մեկեն հարցնում է տղան:

Հիստ՛ւս Քրիստո՛ս . . . Այդ պահին միայն գլխի ընկա, որ տղան մի տեսակ՝ խենթ էր: Ճիշտ է, նա լավ խմած էր, բայց աչքերի մեջ աննորմալ մի բան կար, որ ինձ դուր չէր գալիս: «Դու կարողանո՞ւմ ես լողալ»:

«Իհարկե, — ասում եմ: — Իսկ դո՞ւ»:

«Չէ: Մի երկու թնալող ու վերջ: Ես ոչ մի անգամ կարգին լողալ չեմ սովորել»:

«Դա շատ հեշտ բան է, — ասում եմ: — Պարզապես պետք է մի քիչ համարձակ լինես: Իսկ գիտե՞ս, ինչպես եմ լողալ սովորել: Երբ ութ տարեկան էի, մի օր եղբայրս հրեցզգեց ծովածոցը: Ու, կհավատաս՝ սկսեցի լողալ. . . Էլ ուրիշ ինչ անես, երբ մտածում ես՝ ուր որ է պիտի խեղդվես: Պարզապես ինքնավստահություն է պետք: Ու հենց որ սկսես լողալ, չես վախենա: Էլ երբեք չես մոռանա: Մինչև կյանքիդ վերջը չես մոռանա»:

«Դուք լա՞վ եք լողում», — հարցնում է տղան:

«Ձկան պես: Ջրի մեջ ձուկը քեզ օրինակ: Մյուս երեխաներից ավելի հեռու էի գնում՝ լողալով»:

Հարցնում է. «Ի՞նչ կանեիր, եթե հանկարծ խեղդվող մարդ տեսնեիր»:

«Ինչ կանեի՞: Դե, իսկույն ջուրը կնետվեի ու նրան ասի կհանեի: Հիմա իմացա՞ր ինչ կանեի»:

Ասում է. «Իսկ դուք խեղդվող մարդ տեսե՞լ եք»:

«Իհարկե: Երկու խեղդվող տղաներ եմ տեսել՝ Քատունի կղզում: Նրանցից ոչ մեկը կարգին լողալ չգիտեր, բայց ահագին հեռացել էին նավակայանից: Ու խեղդվեցին: Ոչ մեկը չկարողացավ օգնության հասնել»:

«Իսկ ի՞նչ է պատահում այն մարդկանց, ովքեր այստեղ են խեղդվում»:

«Որտե՞ղ են խեղդվում», — հարցնում եմ:

«Այստե՛ղ, Բրուկլինում»:

«Չեմ հասկանում, ինչ ես ուզում ասել: Ես ոչ մի անգամ չեմ լսել, որ որևէ մեկը Բրուկլինում խեղդվի. . . եթե, իհարկե, լողավազանը նկատի չունես: Բրուկլինում

մարդ չի կարող խեղդվել: Մարդ կարող է մի ուրիշ տեղ . . . ասենք օվկիանոսում, որտեղ ջուր կա»:

«Կխեղդվե՛ն, — ասում է տղան՝ նայելով քարտեզին: Կխեղդվեն»: Հիսո՛ւս և Քրիստո՛ս . . . այդ պահին տեսա, որ նա խենթի պես էր, խելագարի նայվածք ուներ, և ես չէի հասկանում, թե ինչ կարող էր անել: Հասնում էինք կայարան ու, չնայած իմ կանգառը չէր, բայց իջա, սպասեցի մյուս գնացքին:

«Դե լավ . . . ցտեսություն շեֆ . . . , — ասում եմ: — Մի վախեցիր»:

«Կխեղդվեն», — ասում էր տղան՝ նայելով քարտեզին:

Հիսո՛ւս և Քրիստո՛ս . . . Այդ օրվանից մի հազար անգամ մտածել եմ այդ տղայի մասին՝ տեսնես ի՞նչ է պատահել նրան: Եկել է Բենսընիսթը տեսնելու միայն այն պատճառով, որ այդ անունը գեղեցիկ է հնչում . . . դո՛ւր է եկել նրան . . . Թափառել է «Ռեդ Հուկում» գիշերո՛վ, միայնակ՝ քարտեզի օգնությամբ . . . Հարցրեց՝ քանի հոգու եմ տեսել այստեղ՝ Բրուկլինում խեղդվելիս . . . Ինչքա՞ն ժամանակում կարելի է լավ քարտեզով ծայրիցծայր ճանաչել Բրուկլինը . . .

Հիսո՛ւս և Քրիստո՛ս . . . Ինչ խենթն էր նա . . . Բայց հետաքրքիր է, տեսնես ի՞նչ է պատահել այդ տղային . . . Հո մեկնումեկը չի՞ տվել գլխին ու . . . թե՞ փոքրիկ քարտեզը ձեռքին, գիշերվա կեսին դեռ թափառում է երկաթուղային կայարանում . . . Իսե՛ դճ տղա . . . Լսիր, ախր ծիծաղս գալիս է, երբ հիշում եմ նրան . . . Երևի արդեն հասկացել է, որ եթե ամբողջ կյանքում էլ թափառի, չի կարող Բրուկլինը լրիվ ճանաչել: Տղայից մի ամբողջ կյանք կպահանջվի՝ Բրուկլինը ծայրիցծայր ճանաչելու համար: Ու նույնիսկ այն ժամանակ հնարավոր չէ մինչև վերջ ճանաչել թո՛ւհ . . . այդ գրողի տարած քաղաքը: